ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը, ազգանունը՝**
   Մարտիրոս Նալբանդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մոլդովայի Հանրապետություն (Քիշնև), 2025թ.-ի հոկտեմբերի 14-ից 17-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպական Միություն (ԵՄ) կողմից ֆինանսավորող «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագիր

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն Ջրի Շրջանակային Դիրեկտիվի (ՋՇԴ) սկզբունքներին համահունչ մոնիթորինգի համակարգման հարթակի տարածաշրջանային աշխատաժողովին: Մասնակցություն Ջրի Շրջանակային Դիրեկտիվի սկզբունքներին համահունչ մոնիթորինգի համակարգման հարթակի տարածաշրջանային աշխատաժողովին, որն անցկացվեց ԵՄ-ի աջակցությամբ՝ «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագրի շրջանակներում:

   Աշխատաժողովի նպատակը Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի միջև փորձի փոխանակման, ԵՄ ՋՇԴ իրականացման համակարգման ազգային հարթակների ձևավորման և ջրային ռեսուրսների կառավարման համակարգերի բարելավման միջոցով ԵՄ ստանդարտներին մոտարկմանն աջակցելն էր:

6. **Քննարկված թեմաները.**

   - ԵՄ Ջրի Շրջանակային Դիրեկտիվի իրականացման համակարգման ազգային հարթակների ձևավորման սկզբունքները:
   - Ջրային ռեսուրսների պահպանության, մոնիթորինգի և կառավարման համակարգերի բարելավում:
   - Տվյալների հավաքագրման, թվայնացման, վերլուծության և հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործում:

- Միջգերատեսչական համագործակցության և ինստիտուցիոնալ համակարգման ամրապնդում:
- ԵՄ ջրային քաղաքականության շրջանակներում լավագույն փորձի ներկայացում և ներդրում:
- Ջրային մոնիթորինգի համակարգերի ներդրում՝ ներառյալ մակերևութային, ստորերկրյա, հսկողական և գործառնական մոնիթորինգի բաղադրիչները:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

- Ելույթներով հանդես եկան Մոլդովայում ԵՄ պատվիրակության, Մոլդովայի շրջակա միջավայրի նախարարության և «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագրի ներկայացուցիչները:
- Ավստրիայի և Ֆրանսիայի փորձագետները ներկայացրին ՋՇԴ համակարգման եվրոպական մեխանիզմները և ջրային տվյալների կառավարման համակարգերի բարելավման հաջող փորձը:
- Հայաստանի ներկայացուցիչները ներկայացրին երկրի ջրային մոնիթորինգի համակարգի ներկա վիճակը և ԵՄ ստանդարտներին մոտարկման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:
- Քննարկվեցին նաև գետավազանային կառավարման պլանավորման ընթացիկ գործընթացները, տվյալների թվայնացման մարտահրավերները և միջգերատեսչական համագործակցության ձևաչափերը:

8. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>**

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, պարտադիր կատարման ենթակա պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, քվեարկություն չի եղել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>**

- Մոնիթորինգի համակարգերի կատարելագործման, տվյալների որակի վերահսկման և թվայնացման ուղղությամբ քայլերի ձեռնարկում:
- Ազգային մակարդակում ջրային ռեսուրսների կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացում, տվյալների որակի և համադրելիության ապահովում ԵՄ ստանդարտների հիման վրա:
- ԵՄ ՋՇԴ-ի մոնիթորինգային գործիքակազմի կիրառման կարևորում ոչ միայն մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների այլ նաև այդ ռեսուրսների կուտակման և փոխադրման ենթակառուցվածքների համակարգում:

- Հետագայում ձևավերվելիք աշխատանքային խմբերում նաև ջրային ենթակառուցվածքների համար առանձին թեմատիկ խմբի ձևավորում՝ նկատի ունենալով որ նման խմբի շրջանակներում առավել արդյունավետ կերպով հնարավոր կլինի մշակել ԵՄ ՋՇԴ-ին մոտարկման գործողություններ և մեթոդաբանություններ:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

Մ. Նալբանդյան, 30.10.2025թ.